

ԿԱՐԾԻՔ

Գայանե Արամայիսի Մելքոնյանի «Կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության ձևավորման մեթոդիկան մայրենիի ուսումնական գործընթացում»
ատենախոսության մասին

Պաշտպանության ներկայացված սույն խորագրով ատենախոսությունը գրված է ժամանակի հրամայականով: Անառարկելի է այն փաստը, որ բավականաշափ նվազել է դպրոցահասակ երեխաների սերը դեպի գիրքը, ընթերցանությունը: Հարկ է նշել՝ անզամ հիմնական և ավագ դպրոցներում կան սովորողներ, որոնք կարդում են հեգելով: Պատճառը տեղեկատվական տեխնոլոգիաների արագընթաց զարգացումն ու կիրառումն է ինչպես հասարակության, այնպես էլ հանրակրթության մեջ: Այս գերինդրի լուծման համար ատենախոսը հետազոտության նպատակն է համարում իր կողմից մշակված մեթոդական համալիրի ներդրման արդյունավետության և դասագործընթացում գիտելիքների առավել դյուրին յուրացման առանձնահատկությունների հիմնավորումը: Ըստ ատենախոսի՝ սովորողների ընթերցողական կարողության զարգացման գործընթացում որոշակի սկզբունքներով ընտրված և փորձարարությամբ հիմնավորված ուսումնամեթոդական նյութերը ներդնելու դեպքում առաջադիր խնդիրը կիրականացվի արդյունավետորեն: Այս համատեքստում, ըստ ՀՀ տարրական դպրոցի չափորոշիչների և մայրենիի առարկայական ծրագրի, ատենախոսության առաջնահերթություններից են համարվել ընթերցողական կարողության մեթոդամանկավարժական հիմքերը, սովորողների հոգեբանական մտածողության զարգացման դրդապատճառները, կարդացածի շուրջ վերլուծություններ, համադրումներ, դատողություններ, եզրահանգումներ կատարելու ունակությունները և այլն:

Մինչ խնդրո առարկային անդրադառնալը Գ. Մելքոնյանը փորձ է արել քննելու հայ և արտասահմանյան այն մանկավարժների աշխատությունները, որոնք իրենց դիտարկումներում մասնավորաբար վեր են հանել սովորողների ընթերցողական

կարողության զարգացման հիմնախնդիրը՝ Խ. Աբովյան, Ս. Նալբանդյան, Ռ. Պատկանյան, Ստ. Նազարյան, Ա. Բահաթրյան, Ա. Տեր - Գրիգորյան, Զ. Գյուլամիրյան, Ի. Պետալոցցի, Ռ. Օուեն, Ի. Հերբարտ և այլք: Ատենախոսը այն համոզմունքն է հայտնում, որ մանկավարժության և մեթոդիկայի զարգացման տարբեր փուլերում մանկավարժները ըստ անհրաժեշտության խոսել են ընթերցողական կարողության ձևավորման հիմնախնդրի մասին: Տարբեր են եղել մոտեցումները, դիրքորոշումները խնդրո առարկա հարցին, որոնք չեն նպաստել հարցի լուծմանը այնպես, ինչպես ժամանակակից մանկավարժներինը և մեթոդիստ գիտնականներինը:

Ընթերցողական կարողության էությունը և բնութագրիչները ներկայացնելիս ատենախոսը գրում է, որ այսօրվա սերնդի մեծամասնությունը կարդալու նկատմամբ ցուցաբերում է մերժողական վերաբերմունք, որը պատճառ է դառնում ընթերցողական տարաբնույթ խնդիրների առաջացմանը, որոնց լուծումը նա տեսնում է մասնավորաբար կարդալու տեխնիկայի, կարդալու սկզբնական կարողության դյուրին և արագ ձևավորման, ինչպես նաև ընթերցանության նյութերի ընտրության մեջ ըստ տարիքային հաջորդական փուլերի: Այս առնչությամբ կարևորվում են լավ կարդալու տեխնիկայի որակական հինգ հատկանիշները, որոնցում գերազատվությունը տրվում է հատկապես հասկանալով կարդալուն:

Հանդիպած խոչընդոտների և դժվարությունների հաղթահարմանը, ըստ ատենախոսի, կարելի է հասնել բացատրական ընթերցանության մեթոդի բոլոր բաղադրիչների կազմակերպման ձանապարհով: Այս տեսանկյունից կարևորվում են Ծիվինի, «Մտածողության վեց գլխարկներ», «Չընդհատվող խաղերի կիրառումը» մեթոդները:

Ատենախոսության հիմնախնդիրներից են նաև ՀՀ հանրակրթական դպրոցի տարրական դասարանների նախկին և նոր ՀՊՀ-ի հիման վրա ստեղծված մայրենիկ ծրագրերի և դասագրքերի հնարավորությունները սովորողների ընթերցողական կարողության զարգացման տեսանկյունից: Նշված համատեքստում հեղինակը փորձ է արել դիտարկելու, համադրելու և հակադրելու ՀՀ հանրակրթական հիմնական

դպրոցի առաջինից չորրորդ դասարաններում մինչև 2024-2025 ուստարին գործածվող և ՀՀ կրթական չափորոշիչների հիման վրա ստեղծված մայրենիի դասագրքերի առանձնահատկությունները ատենախոսության հիմնախնդրի տեսանկյունից:

Մայրենիի վերոնշյալ դասագրքերը դիտարկելով՝ ատենախոսը նկատում է, որ գործածության մեջ գտնվող, ինչպես նախկին, այնպես էլ մայրենիի նոր ծրագրերում, տարրական կրթության առաջնահերթ և կարևոր խնդիր է համարվում կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության զարգացման հիմնահարցը։ Կազմակերպված դասալսումների, հարցախույզների, ուսումնասիրությունների արդյունքում հեղինակը այն համոզմունքն է արտահայտում, որ դասագրքերի մեթոդական կառույցների բաղադրիչներն առավել բազմաբնույթ դարձնելու, կարդալու ունակության, ընթերցողական կարողության զարգացման նպատակով սովորողների ստեղծագործական և մտածական կարողությունները զարգացնող առաջադրանքներով դասագրքերը հազեցնելու դեպքում միայն կապահովվի կրտսեր դպրոցականի ընթերցողական կարողության զարգացման անհրաժեշտ մակարդակ՝ կարդալու բոլոր տեսակներով։

Մշակվել են և փորձարարական նպատակով դիտարկվել ՀՀ պետական կրթական նոր չափորոշիչները և մայրենիի ծրագիրը, դասագրքերը, կրտսեր դպրոցականի ընթերցողական կարողության զարգացման գործընթացի վերաբերյալ տարրական դպրոցի կարծիքները։

Հետազոտությունը գրելու ընթացքում տարբեր տրամագրերի միջոցով իրականացվել է ուսուցիչներին ուղղված հարցախույզ, որի ժամանակ կատարվել են որոշակի ընդհանրացումներ և դրանց հիման վրա բացահայտվել ընթերցողական կարողության զարգացման գործընթացում ուսուցիչների և սովորողների առջև ծառացած դժվարությունները, ուսուցիչների կարծիքը, փորձարարությամբ հիմնավորվել են մայրենիի դասագրքերում գետեղված հարցերի ու առաջադրանքների դերը հիմնախնդրի վերաբերյալ։

Սովորողների ընթերցողական կարողության զարգացման գործընթացը տարրական դպրոցում դիտարկելիս հեղինակը փորձ է արել կարևորելու բարենպաստ կրթական միջավայրի դերը խնդրո առարկա հարցի արդյունավետ կազմակերպման գործում, վեր է հանել բոլոր անհրաժեշտ նախադրյալները:

Հետազոտության արդյունքում բացահայտվել են նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողությունների զարգացման գործընթացի վերաբերյալ ուսուցիչների մոտեցումները և դիրքորոշումները, իրականացվել է հարցախույզ ուսուցիչների շրջանում:

Փորձաքննությունը հաստատել է մշակված մեթոդական առաջարկների մատչելիությունը, կենսունակությունը և արդյունավետությունը դասագործընթացում առկա դժվարություններն ու խոչընդոտները հաղթահարելու գործում:

Ատենախոսությանը կցված վեց արժեքավոր հավելվածներում տեղ են գտել ատենախոսության հիմնախնդրին առնչվող տարաբնույթ հարցադրումներ:

Նկատենք, որ Գ. Մելքոնյանի ատենախոսությունը օժտված է մի շարք էական հատկանիշներով: Ամենից առաջ հարկ է նշել, որ հեղինակը քաջածանոթ է հիմնախնդրին վերաբերող տեսական և մեթոդամանկավարժական բնույթի թե՛ հայ, թե՛ արտասահմանյան բազմաթիվ մեթոդիստ մանկավաժների աշխատություններին: Հավելենք, որ ատենախոսը ոչ միայն վերլուծում է խնդրո առարկա հարցին վերաբերող փաստերը, այլև կատարում է սեփական փորձից բխող ինքնուրույն եզրահանգումներ: Կարծում ենք՝ Գ. Մելքոնյանը կարողացել է հաջողությամբ լուծել իր առջև դրված խնդիրը, քանի որ ուսուցման մեթոդների և առհասարակ մանկավարժական հարցերի մասին գրողը պետք է աշխատած լինի կամ աշխատի դպրոցում: Իսկ հետազոտության հեղինակի համար բարեբախտություն է կրտսեր դպրոցականների հետ ամեն օր շփվելը, նրանց կողքին լինելը:

Ատենախոսն ունի գիտական պատշաճ մակարդակ, երևույթն զգալու, վերլուծելու, տեսականի և մեթոդականի սահմանները նկատելու և ուսուցանելու

շոշափելի պատրաստականություն: Գ Մելքոնյանը զիտության բնագավառ է մտնում որպես հմուտ մեթոդիստ մանկավարժ: Աշխատանքը գրված է ամենայն բարեխեղձությամբ, պատասխանատվության բարձր զգացումով, նյութը լիովին իմացող մասնագետի մակարդակով և անաշառությամբ, որոնք այնքան որոշակի երևում են ատենախոսության յուրաքանչյուր հարցի պարզաբանման մեջ: Սույն հետազոտության մեջ կրտսեր դպրոցի մեր ուսուցիչները կարող են գտնել ընթերցողական կարողության զարգացման ուսուցման մեթոդիկային առնչվող շատ հարցերի պատասխաններ:

Այնուհանդերձ, թող այն տպավորությունը չստեղծվի, թե աշխատանքը զերծ է թերություններից: Ահա մի քանի նկատառումներ և առաջարկներ, որոնց հաշվառումը մեր կարծիքով անհամեմատ կատարյալ ու անթերի կդարձնի աշխատանքի հրատարակության պատրաստվող տարրերակը:

1. Ատենախոսության որոշ հատվածներ կրում են նկարագրական բնույթ: Կարծում ենք՝ որոշ մեկնաբանություններ ըստ անհրաժեշտության պետք է ուղեկցվեին գործնական բնույթի առաջադրանքներով՝ յուրաքանչյուր դասարանի դասագրքից ընտրված մանկական որևէ գրական ստեղծագործության ուսուցման քայլաշարը և մեթոդական համալիրը ներկայացնելով:

2. «Ներածություն» բաժնում և 1.1. ենթագլխում հանդիպում են շարադրանքի կրկնություններ՝ մասնակիորեն փոփոխված ձևակերպումներով (նաև 109, 110, 112, 122 էջերում):

3. Վերջին նկատառումը տեխնիկական բնույթի է: Արժեք՝ 1.2., 1.3. ենթագլուխները, որոնք վերաբերում են հարցի պատմությանը, նախորդեին 1.1. ենթագլխին, որում քննված են ընթերցողական կարողության էությունը և բնութագրիչները: Սրանով խախտված է ատենախոսության կառուցվածքի տրամաբանական կամրջակը:

Անշուշտ, վերոնշյալները չեն ստվերում պաշտպանության ներկայացված ատենախոսության ակնհայտ արժանիքները, որոնք, ինչպես նկատեցինք, լուրջ ներդրում են մեթոդամանկավարժական բնագավառում:

Գայանե Արամայիսի Մելքոնյանի «Կրտսեր դպրոցականների ընթերցողական կարողության ձևավորման մեթոդիկան մայրենիի ուսումնական գործընթացում» խորագրով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի և ԲԿԳԿ-ի կողմից ԺԳ. 00. 02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (մայրենի)» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջներին, և հեղինակն արժանի է հայցած գիտական աստիճանին:

Մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսորի պաշտոնակատար
Գայանե Լիպարիտի Խալաթյան



(ստորագրություն)

09.01.2026

Գայանե Լիպարիտի Խալաթյանի ստորագրության իսկությունը հաստատում էմ:

Խ. Աբովյանի անվան ՀՊԱՀ գիտքաբանության մ.գ.թ., դոց. Հակոբ Թաղևոսյան



(ստորագրություն և կնիք)

12.01.2026թ.

